



2015 թվականի փետրվարի 13-ին, Վրաստանում Գերմանիայի Դաշնության դեսպանատանը, արտակարգ և լիազոր դեսպան Օրթվին Հենիգի նախաձեռնությամբ, կայացավ հանդիպում Գերմանիայի Դաշնության Բունդեստագի նախագահի դոկտոր Նորբերտ Լամներտի հետ: Հանդիպմանը մասնակցում էին Վրաց Ուղղափառ, Հռոմեական կաթոլիկ, Գերմանական լյութերական, Սկոտական-ավետարանական Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ, Հրեական համայնքի ռաբբին և Եզդի համայնքի հոգևոր առաջնորդը:

Հանդիպմանն իր մասնակցությունն էր բերել Վիրահայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը:

Հանդիպմանը Գերմանիայի Բունդեստագի նախագահը հետաքրքրվեց Վրաստանում կրոնական հանդուրժողականության մասին: Բարձրաստիճան հյուրին հետաքրքրում էր նաև քրիստոնյաների, մահմեդականների, հուդոյականների և այլ կրոնական համայնքների փոխհամագործակցությունը:



